

3956

3nzuung

7 Gruen Eptatum uel hennwys  
5 sparsus

151.7

3n-58

1928

14 JUL 2009

Հ. Օ. Խ. Հ. ՎԱԽՈՎՈՎՈՅՆ

ՍՈՅ. Դ. Ա. Ա. Ր. Ա. Կ. Ա. Թ. Ա. Պ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

ՅՈՒԱՆԱՌՈՆ

ԻՆՉՈՒ ՅԵՐԵՒԱՆ ՄԱԿԱՎԱՏ Ե  
ԴԱՐԱՆՈՒՄ

151.7  
3n-58

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1928

625

90/2802

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺՎԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԱԾԻ-ՊՐՈՎԻՆԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅՈՒՂԱՆՑՈՒՆ

51.7

3n-58  
*ՄՐ*

ԻՆՉՈՒ ՅԵՐԵՒԱՆ ՍԱՄՎԱԾ Ե  
ԴԱՐԱՆԻՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1928

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐՔՈՒՅՑ № 4

Գրառեպիվար 717 թ հ. 739 Տիրաժ 2 500

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում - .613

ԻՆՉՈՌԻ ՅԵՐԵԽԱՆ ՄՆԱԿԱՎԱՆ Ե ԴԱՐՆՈՒՄ

Փոքրիկ յերեխան շրջապատված է առարկաներով, կենդանիներով ու մարդկանցով, վորոնց թեև նա չի ճանաչում, բայց ստիպված է ապրել նրանց մեջ. այդպես շփվելով նրանց հետ, նա տեսնում է, վոր առարկաներից մի քանիսը նրան հաճույք են պատճառում (որինակ խնձորը համեղ է, կարելի յե ուտել). կան առարկաներ ել, վոր նրան ցավ են պատճառում (մեղրածանձի խայթ). ուրշներն ել այնքան մեծ են ու այնպես աղմուկ են բարձրացնում, վոր նա սկսում է գոռալ և վախից լաց լինել (չներ, ավտո և ալին):

Յերբ յերեխան անծանոթ առարկաներ ե տեսնում, աշխատում է ճանաչել այդ առարկաները, բռնել, շոշափել, շպրտել, նրա ձախը լսել, հոտը քաշել, համը տեսնել: Բայց ամեն մի մայր զիտե, վոր այդպես անելիս, յերեխան կարող է իրեն գլխին փորձանք բերել-ալրվել, վայր բնկնել, շունը կարող է նրան կծել, կատուն կարող է ճանկոթել:

Յեվ ահա մեծերն ոգնում են յերեխային շրջապատն այնպես ճանաչելու, վոր վաս չկրի. իր առողջությանն ու կյանքին վտանգ չսպառ-

նաւ։ Ազնությունը զանազան տեսակ և լինում։ Յերեխան ձեռքը ուեկնում եւ գեպի ինքնալեսը, նրան զզուշացնում են, ասելով. «Զեռք մի տա, կայրվես»։ Վոմանք ել գոռում են վրան, ուրիշներ ել յերեխին են հասցնում։ Այսպիսի գեպքերում մեծերն ազդում են յերեխալին խոսքերով ու գործով, մեծ ձասամբ արգելրով ու վախով։ Վոմանք ել ու շաղրությամբ հետեւում են յերեխալին և աշխատում են այնպէս դասավորել յերեխալի կրանքը, վոր շրջապատող առարկաները յերեխալին չփառաեն. բայց միենույն ժամանակ հսարապորություն են տալիս յերեխալին այնուեղ, վորտեղ վոչ մի վտանգ չկա, ինքը ճանաշի իրերը—շոշափի, վազի, ձեռք տա, տեղից շարժի, նայի և այն. այդ գործողությունների ընթացքում, նրանք խոսում են յերեխալի հետ, պատասխանում նրա տված հարցերին, առարկալի անուններն են տալիս և այն։

Որինակ, ձմեր, յերբ սառած են զբությունը (յեղտուրներ) յերեխան փորձում եւ գնալ սառցի վրայով, սայթոքում ե, և յերբ մեծը, ուշագրությամբ նրան հետեւլով, տեսնում ե, վոր նաթեթև ընկնում եւ ուրեմն չի մնավի, թողնում ե, վոր յերեխան ընկնի յերեխան ինքը զլիի յե ընկնում վոր սառուցը սահուն եւ վոր սառցի վրա զբուշությամբ պետք եւ քաղելու վազել։ Բայց յերեխան, ճանաչելով իր շրջապատը,

չի կարող բացատրել, թե այս կամ այն բանն ինչու յե տեղի ունենում, կամ կարող եւ սիալ ըմբռնել այդ բոլորը։ Որինակ՝ յերեք տարեկան աղջիկն իր հիվանդ սորաքըրջ համար փողոցից ձեռագնդի յե նվեր բերում, զնում եւ ափսելի մեջ. ձունագունդն ի հարկե հալչում ե. փոքր ինչ հետո, վերադառնում ե յերեխան տուն և հարցնում։ «Զյունագունդն ինչ յեզավ»։ «Հալվել ե, տեսնում ես ափսելի միջի ջուրը» պատասխանում են նրան. բայց յերեխան շարունակում ե հարցնել. «Ի՞նչ արիր ձյունագունդը»։ Ուրեմն նրա համար անհականալի բան ե ձյունի հալչելը։ Յերբ որելը ապահում են, և փողոցի ձյունն սկսում ե հալչել, նույն աղջիկը հարցնում ե. «Ճյունն ինչ յեզավ. և ով ե փողոցները ջուր լցրել»։ Այստեղից յերեւմ ե, վոր յերեք տարեկան աղջկա համար անհականալի բան ե տաքությունից ձյունի հալչելը։ Նա դիտե, վոր ձրմեռը, ջուրը ձորակից են վերցնում, գետից են բերում, թափում հատակին. ինքն ել շատ անզամ թափել ե. — ուրեմն փողոցումն ել անպահման մեկն ու մեկը թափած կլինի։ Այդպիս ահա յերբ մենք տեսնում ենք, վոր յերեխան վորեկ բան չի հասկանում, մենք պետք ե ոգնենք նրան. վոր նա հասկանա, թե ինչպես և ինչու յե կատարվում այդ բոլորը։ Տվյալ գեպքում մեծերը յերեխալի հետ վերցնում են ձյունը պահում

ձեռքերի մեջ.—ջուրն սկսում ե կաթել. հետո ձյունը տանում են սենյակ և յերեխան նորից կտեսնի, վոր ձյունը ջուր ե դառնում: Կնայի, կշոշափի ձեռքերով - ձեռքերը տաք են, սենյակն ել ե տաք. և յեթե նուրի բանը մի քամնի անգամ անհն, յերեխան կհասկանա, վոր տաքությունից ձյունը հալչում, ջուր ե դառնում: Մեծերը պետք ե ոգնեն, վոր յերեխաները լավ ճանաչեն իրենց շրջապատն ու ճիշտ ճանաչեն և իմանան, թե այդ բոլորն ինչու և ինչպես ե տեղի ունենում:

Բայց հենց նման դեպքերում, մեծերն իրենք ել շատ բան չգիտեն, կամ սխալ գիտեն, և այդ պատճառով ել սկսում են յերեխայի զլուխը սխալ-մխալ բաներ մտցնել և նույն իսկ վախեցնել յերեխային, փոխանակ նրա հետ միաօին տեսնելու և անեն ինչի լավ ծանոթանալու:

Որինակ. ընտանիքում, յերբ թելի ժամանակ բոլորը նստած են սեղանի շուրջը ինքնայերը սկսում ե խշշալ. հետո մի տեսակ ձայն հանել, կարծես հառաչել. յերեխան լսում ե, թե ինչպես մայրն ասում ե «Լավ բան չի գուշակում այս ձայնը. մեկի զլուխը կուտի անպայման»: Յերեխան, վոր սովոր ե հավատալ մեծերի խօսքին, լսում ե այս բոլորը և սկսում ե համոզվել վոր իսկապես ինքնայերի հառաջանքը լավ բան չի գուշակում:

Գլշերը շունը վոռնում ե դրսում—ելի՛ վատ բան ե գուշակում: «Վազի՛ր, Սուրբիկ, և տես, թե շունը դունչն ինչպես ե բռնել. դեպի վեր, թե դեպի ցած»—«դեպի ցած»,—պատասխանում ե Սուրբիկը վերագանա, ով.—«Աստված իմ, մեկը մեւնելու յե»—սարսափով բացազմնչում են մայրն ու տատը: Խրճիթում խավարասերներ (սև միջատներ) են յերեռում. տատն ուրախանում ե. «Հարստության ու շահի նշան ե»: Հայրն առավոտ ախոռ ե զնում, սեմնում ե, վոր ձին կանգնած ե ամբողջովին քրտնած, բաշը գզզզված ու խճճված. «Զարքերը չարչարում են ձիուն», բացատրում ե տատը: Յերեխաները յերեկոյան անցնում են անտառով. սկսում ե մրթնել. բամի յե բարձրանում: Հանկարծ անտառում լսվում ե ինչ վոր տիբրագին հառաջանք, վորը հետո ավելի յե սաստկանում: Յերեխաները չորս վոր առած՝ վազում են տուն ու պատմում պապին. «Անկասկած անտառի վոգին ե», ասում ե պապը: «Զարքերն են»—ասում ե տատը և խաչակնքում յերեսը: Հետեւյալ ամբողջ որն ու գիշերը փոթորկոտ յեղանակ ե լինում. անտառում լսվում ե նույն հառաջանքը. մեծերն ել են լսում: Յերրորդ որը, յերբ հանդարտում ե յեղանակը, այդ ձայնն ել չի լսվում: Մի քանի որ հետո կրկն վում ե նույն հառաջանքը:

Ամբողջ զլուզն իրարանցումի մեջ ե. զա-

նազան լուրեր են պտավում. բայց բոլորը միաբերան նույն բանն են ասում, թե՝ «լավ բան չեն գուշակում այս բոլորը»:

Յերեխաներն ագարակում քաղհան են ասում. Լուսին ել կաղամբի տակից մի գունդ հող ե վերցնում, տեսնում ե, վոր գունդը շարժվում ե. Լուսիկը սարսափում ե, ճիչ ե արձակում, վախեցնում բոլորին, ասելով վոր ինչ վոր մեկը շարժվում ե. «Գետնագորտ ե, թյու, անիծված, սատկեցրո, եդ զգվելուն»: «Սրբի՛ ձեռքերդ սրբի՛ր» — ասում ե մալրը «թե չե գորտնուկներ գուրս կզան»:

Մի ուրիշ անգամ, բակից գոմազը դուքս կրելիս, հայրը լեզանը խրում ե գոմազը մեջ և նկատում, վոր այստեղ թափանցիկ կեղեռվ ձվեր կան. «Աքաղաղի ձվեր են, մեր աքաղաղի մեջ չար վոզի կա. պետք ե ալրել ձվերը, իսկ աքաղաղին՝ ծակոտել»: Յեվ արսպես, յերեխան ապրում ե այս սարսափներով շրջապատված, լսում ե շարունակ անտառի ու չար վոզիների, շարքերի մասին և հագատում ե այն բոլորին, ինչ մեծերն են ասում, կմեծանա այդ ազդեցությունների տակ, և ստիպված կը լինի ամեն ինչ առաջվապես - վախից անել վոր շինի թե բան պատահի, չը լինի թե փորձանք գա, յեթե հանկարծ վոչ թե այդպես անի, ալլ ուրիշ կերպ:

Այն ինչ, յեթե մենք չհավատանք այն բոլո-

րին, ինչ վոր ասում են, ալլ աշխատենք դիտել, այն ժամանակ պարզ կը լինի, վոր վոչ թե չար վոզին կամ չարքերն են դրանց պատճառը, ալլ մեր անդիտությունն ու տգիտությունը:

Այսպիսի մի դեպք ե պատահել 1922—1923 թվի ձմեռը: Մի ամս բակում, վորտեղ մանկապարտեզն ե լինում, յերկում ե մի սկ ագռավ, նրա յետելից ել յերկրորդը: Ակզբում նրանք նրա տում են ցանկապատի վրա, իսկ հետո թռչում, նստում են պատուհանի վրա զրսից: Մարդիկ աշխատում ելին նրանց մի լավ դիտել, վորովհետեւ այդ թռչունները սովորաբար բարձրեր են թռչում և իրենց բները շինում են զանգակատների մեջ, կամ բարձր ծառերին, իրենց ել տեսնել չես կարող: Ագռամիների մասին պատմեցին մանկապարտեզի կառավարչունուն և տեխնիկական աշխատավորներին: «Վատ նշան ե, ձեզնից մեկը կմեռնի», — միաբերան հաստատեցին տեխնիկական աշխատավորները: Ակսեցին պատճառները փնտուել, թե ինչն լին ագռամիներին այս բակը թողնում. և յերբ հետեւցին, թե վնրտեղ հն նրանք ապրում, պարզվեց, վոր մոտիկ յեկեղեցու զանգակատանն են ապրում: Ակզբում նըրանք նստում ելին ցանկապատի վրա և դիտում, յերբ բակում մարդ չեր լինում, նրանք թռչում, գալիս ելին դեպի աղբի արկզը, վորտեղ յերեխաների ուտելիքի մնացորդներ շատ կային:

Սկսեցին գիտել, թե ինչու ելին նրանք թռչում գեպի պատուհանները և տեսան, վոր ագուավներն արագությամբ թռցնում ելին ճարպի ու մսի կտորներ, վորոնք թերով կապած ու կախ ելին տված այդ պատուհանից, (այստեղ թռչունների համար միշտ կերակրածան եր լինում կախ տված, վորի մեջ փշրանքներ ելին թափում. իսկ երաշտահավի համար ճարպ կամ միս ելին կախ տպալիս): Այդպես, պարզվեց, թե ագուավներն ինչու ելին թռչում գեպի այդ պատուհանները. և վոչ մի գժբախտություն վոչ մեկին, ի հարկե, չը պատահեց: Իսկ յեթե այդ բանը պատահեր այնպիսի մարդկանց, վորոնք հավատում են զանազան նշանների, գուցե գիշերները քնել չկարողանալին—ախ ու վախով անցկացնելին:

Անտառում լսվող հառաչանքներն ել շատ պարզ ձեռվ են բացատրվում: Ծառերի վրա փշակներ կան ճեղքվածքներով. յերբ քամին ուժգնորեն փչում ե, նույն ուժգնությամբ մըտնում ե այդ փշակների ճեղքերը, վորից և այդ սուլոցն ու հառաչն ե լսվում: Հետո քամին ուրիշ ճեղքեր ե մտնում և նույն ձայնն անցնում ե ամբողջ անտառով: Յերբ դադարում ե քամին, այդ ձայնն ել չի լսվում:

Չիուն ել վոչ թե չարքերն են չարչարել, այլ պարզապես աքիսն ե խաղացել նրա յերկար բացի հետ:

Պարզ ե ուրեմն, վոր չափահասները նման անմտություններ, պառավական խոսքեր չպետք ե կրկնեն, այլ պետք ե աշխատեն գիտակցել և հասկանալ, թե ինչու և ինչպես ե տեղի ունենում այս կամ այն բանը: Պետք ե խրճիթ-ընթերցարան հաճախել, ակումք, գրքեր կարդալ, զրուցել ուսուցչի հետ և այն ժամանակ միայն բացատրել, հասկացնել յերեխալին: Իսկ յեթե մի բան իրենք՝ ծնողները չը գիտեն, չպետք ե թագցընել յերեխալից իրենց չիմանալը: Ինչ վոր հնարավոր ե, պետք ե յերեխալի հետ միասին գիտել, հասկանալ, թե այսինչ բանն ինչպես տեղի ունեցավ և ինչ գուրս կգա դրանից:

Որինակ՝ կաղամբի վրայից վորդեր են հավաքում և չգիտեն, թե դրանք նույն վորդերից են, ինչ վոր հողի միջի վորդերը: Մաքներով ել չի անցնում, վոր դրանք ճիծուներ չեն և վոր այդ վորդերից թիթեռնիկներ են գուրս գալու:

Գումաղբում գտած ձվերն ել վոչ թե պետք ե այրել, այլ կրկին գոմաղբում պետք ե ծածկել այնպիսի մի ապահով տեղ, ուր վոչ վոր չը կարողանա ճեռք տալ. յերեխաներն ել ամեն որ թող գան ու դիտեն ձվերից մեկը; զգուշությամբ գոմաղբը քրբելով, վորից հետո զգուշությամբ ծածկեն, վոր ձուն չսառի: Վորոշ ժամանակից հետո նրանք կնկատեն, վոր ձվի մեջ ինչ վոր բան սկին ե տալիս, գնալով մթնում ե և վերջա-

տելով յերեխալի հետ այս կամ այն կենդանին։  
կենդանիների ու թռչունների կլանքը զի-  
տելն ու ուսումնասիրելը շատ են ոգնում յերե-  
խալին, վոր նա ավելի գիտակցորեն վերաբերվի  
իր ըջապատին, թե ինչպես և վարտեղ են այդ  
կենդանիներն ու թռչուններն ապրում, ինչ ան  
ուտում, ինչպես են բազմանում։ Յերեխաները  
լով պետք ե գիտեն նաև սարգերը, ճանձերը և  
սյուս միջատները։ Յեվ այն ժամանակ յերեխան  
կիմանանք վոր, այսպես կոչված, խայթոցը նրա  
լեզուն ե, վոր նա դուրս ե հանում իմանալու  
համար, թե ինչ ե կատարվում յուր շուրջը։  
Այնպես, ինչպես մենք շատ բան ճանաչում ենք  
ձեռքերով, թթով, լորդուկն ել լեզով։ Ե իմա-  
նում, թե ինչն ե իրեն համար ոգտակար և ինչը՝  
վնասակար։ Դիտելով յերեխաները կը տեսնեն,  
վոր նա չի խալթում, չի կծում, այլ կուլ ե տա-  
լիս վորսը և վոր նրա յերախը (ոեխ) այնպիսի  
կազմություն ունի, վոր կարող ե լայն բացվել.  
ատամները, վոր կարթի յեն նման, ոգնում են  
վորսը կուլ տալու, որինակ՝ մկներ։ արդ ատամ-  
ներն ոգնում են, վոր բերանն առած վորսը կը-  
լանը գնա։ Պետք ե լավ գիտել լորդուկի նշան-  
ները—աչքերի վերև գտնվող դեղին բծերը, մեջ-  
քի համարյա սև գունը, վորպեսզի յերեխան կա-  
րողանա զանազանել նրան թունավոր իժից, վոր  
չըռնի իմն այնպես, ինչպես լորդուն ե բռնում։  
Այս բոլորին պետք ե ոգնեն մեծերը, դի-

պես այդ ձվերից ել լորդուկներ են դուրս գա-  
լիս։ Իսկ գյուղում բոլորը գիտեն, վոր լորդուկ-  
ներն ոգտակար կենդանիներ են, վոր նրանք  
վոչնչացնում են խավարասերներին (սև միջատ-  
ներ) ու մկներին։ Այ քեզ աքլորի ձվեր....  
Լավ կը լինի, վոչ միայն գիտել, թե ինչ-  
պես ե լորդուն ապրում, մեծանում, ինչ ե ու-  
տում, գիտել նրա բերանը—և այն ժամանակ  
կիմանանք վոր, այսպես կոչված, խայթոցը նրա  
լեզուն ե, վոր նա դուրս ե հանում իմանալու  
համար, թե ինչ ե կատարվում յուր շուրջը։  
Այնպես, ինչպես մենք շատ բան ճանաչում ենք  
ձեռքերով, թթով, լորդուկն ել լեզով։ Ե իմա-  
նում, թե ինչն ե իրեն համար ոգտակար և ինչը՝  
վնասակար։ Դիտելով յերեխաները կը տեսնեն,  
վոր նա չի խալթում, չի կծում, այլ կուլ ե տա-  
լիս վորսը և վոր նրա յերախը (ոեխ) այնպիսի  
կազմություն ունի, վոր կարող ե լայն բացվել.  
ատամները, վոր կարթի յեն նման, ոգնում են  
վորսը կուլ տալու, որինակ՝ մկներ։ արդ ատամ-  
ներն ոգնում են, վոր բերանն առած վորսը կը-  
լանը գնա։ Պետք ե լավ գիտել լորդուկի նշան-  
ները—աչքերի վերև գտնվող դեղին բծերը, մեջ-  
քի համարյա սև գունը, վորպեսզի յերեխան կա-  
րողանա զանազանել նրան թունավոր իժից, վոր  
չըռնի իմն այնպես, ինչպես լորդուն ե բռնում։  
Այս բոլորին պետք ե ոգնեն մեծերը, դի-

և այն) նստելուց հետո գալիս են մեր ու մեր ուտելիքի վրա յեն նստում և այդպիսով զզվանք պատճառում կամ ամեն տեսակ հիվանդություններ առաջացնում: Իսկ բանի վոր սարդերը վաշնչացնում են ճանձերին, ուրեմն պետք ե պահպանել սարդերին, փոխանակ վոչնչացնելու, ի հարկե, միայն մի սարդը չի կարող բոլոր վնասակար միջատներին վորսալ վոչնչացնել, յեթե մենք մաքուր չպահենք մեր տներն ու բակերը. բայց և այնպես, սարդը մեզ ոգուտ ե տալիս, իսկ թախտաբիթին, ճանձերն ու մոծակները՝ վնաս:

Յեթե մենք ուշադրությամբ դիտենք, կը տեսնենք, վոր ճանձերը հարյուրավոր ձվեր են դնում, վորոնցից սպիտակ վորդեր են դուրս գալիս. զրանք լինում են աղբակույտերի, ճոտած բանջարեղենի, մարի վրա, արտաքնոցներում, ուր նրանք վիտում են: Այդ վորդերից ել հետո ճանձեր են դուրս գալիս:

Յերբ յերեխան՝ ինքը տեսնի այս բոլորը, նա կհասկանա, թե վարին պետք ե վոչնչացնել, վորին վոչ: Շատ հաճախ յերեխաներն սպանում են գորտերին, գեանազորտերին, բայց ելի պետք ե դիտեն, թե ինչպես են նրանք ապրում, ինչով են կերակրվում, և այն ժամանակ կհասկունան, վոր նրանց վոչ թե պետք ե վոչնչացնել՝ այլ պահպանել: Գետնազորտերը հեշտությամբ

վորառում են բանջարանոցներում կաղամբի ու յելակի վրա յեղած մաղասամորթներին, կաղամբի ճանձերին, իսկ գորտերը մոծակներ ու ճանձեր են վորսում: Իսկ յեթե նրանց պահելու վնեն ապակե անոթի մեջ և անտեղ ամանով ջուր ու հող դնեն, այն ժամանակ կարելի յետեսնել, թե ինչպես են նրանք խավարասերներ վորսում, յերբ վերջիններիս գցում են այդ պահկե անոթի մեջ: Իսկ ինչ վերաբերում է գորտնուկներին, վորոնց մասին ասում են՝ իբր թե գորտերին ձեռք տալուց են առաջանում, յերեխաններից շատերի ձեռքերին ե լինում. բայց չե վոր բոլոր յերեխանները չեն ձեռք տալիս գորտնուկներին, մանավանդ աղջիկները, վոր վախենում են գորտերից. բայց և այնպես աղջիկների ձեռքերին ել են գորտնուկներ պատահում:

Հաճախ լսում ենք գլուղացիներից, թե «Աստված ճիճուներ ուղարկեց խնձորենիներին, ու բոլոր խնձորենիները փչացան». պատահել ե այսպիսի մի գեպը. 1922 թվին, դաշտերում, հատկապես փուշի վրա, շատ «ճիճուներ» են յերեան յեկել և գլուղերից մեկում, առավոտը, անձրեից հետո, շատացել են. գլուղացիները լուր են տարածում, թե՝ «Աստված ճիճուների ամպ ե ուղարկել, անձրեի պես ճիճուներ թափվեցին».... Այս բոլորը սուտ բան ե: Ճիճուների ամպ չի կարող լինել. պետք ե նայել, թե վոր-

տեղից են առաջ գալիս այդ ճիճուները։ Վերցնենք, որինակի համար կաղամբը շատերը նրա վրայից հավաքած կլինեն այդ տեսակ «ճիճուներ» (գիտնականները նրանց «թրթուրներ» են անվանում). վորտեղից են առաջ գալիս. ահա մի հարց։ Յեթե ուշադրությամբ դիտենք կաղամբի տերեկի հակառակ կողմը, կը տեսնենք, վոր իրար հետ միացած, փոքրիկ սերմերի նման կպած են վրան։ Յեթե նրանց, տերեկի հետ միասին, դնենք ապակե անոթի մեջ, նրանցից փոքրիկ ճիճուներ դուրս կղան։ յեթե կանոնափոր կերպով ամեն որ այստեղ կաղամբի տերեներ դնենք, կտեսնենք, վոր այդ ճիճուներն սկսում են ուտել, մեծանալ և հետո վոստախնով կպչելով պատերին, մնում են անշարժ, փոխում են իրենց ձեր և վորոշ ժամանակից հետո զբանցից սպիտակ թիթեռնիկներ են դուրս գալիս, վորոնց յեթե թողնենք, նորից կարող են կաղամբի վրա ձվեր դնել։ Ահա այստեղ յերեխաները կտեսնեն, վոր ճիճուները վնչ թե ամպերից են յեկել, այլ նրանք դուրս են յեկել ձվերից, վոր այդ ձվերը կաղամբի տերեների վրա յեն գտնվում և վոր նրանց պետք ե վոչնչացնել։

Այս բոլորից յերեւում ե, վոր յերեխային ժանկությունից պետք ե սովորեցնել դիտել շրջապատող իրերը, ճանաչել, գտնել նրանց պատճառները և չհավատալ այն բոլորին, ինչ վերա-

բերում ե չարքերին, ճիճուների ամպին, գորտնուկներին և այլն։

Իսկ փոքրիկ յերեխայի հետ այդ բոլորն անելը շատ հեշտ է, քանի վոր առանց զրան ել յերեխան ինքն ե աշխատում ամեն ինչ ճանաշել ձեռք տալ շիտը շոշափել։ Այս բանից պետք ե ոգտվել.՝ պետք ե ոգնել նրան՝ դիտել ծանոթանալ կերակրել այս կամ այն կենդանուն, իսկ յեթե ծնողն՝ ինքը փորոշ բան չգիտե, նա ինքը պետք ե ծանոթանա զրգերով, իմ մոտ և ապա յերեխայի հետ միասին ուսումնասիրե, ի հարկե, ամեն ինչ չի կարելի և հնարավոր ել չե յերեխային ցուց տալ. այն ժամանակ ծնողները կարող են պատմելով բացատրել յերեխային։ Որինակ, ուշ զիշերին անսատից բուի կոխնչն ե լուսվում, ի հարկե, գնալ տեսնել յերեխայի հետ՝ գժվար ե. այդ ժամանակ յերեխային մեծերը պետք ե ասեն, թե այդ ձայն հանողը մի թոշուն ե, վորին բու յեն ասում, և վոր այդ թոշունը մկներ ե վրասում։ Յերեխան ել չի վախենա բվի կոխնչից և մաքովն ել չի անցնի, թե «անտափ վոգին» և արդպես հրհուում, ինչպես առաջ նրան կրացատրեր իր տատը։

Յեթե յերեխաները մանկությունից այսպես գաստիարակվեն, նրանք ի զոր տեսնելուն վոքնչացնի, չեն սպանի գորտերին, գետնագործերին, չեն քանդի թոշուների բներն ու չեն

բոնի նրանց: Յերեխաները կիմանան, վոր թըռչուններից վոմանք վոչչացնում են ծառի բնի վրա գտնված վնասակար թրթուրները (փայտփորը), մյուսները ճյուղերի վրալի վնասակար ձվերն են վոչչացնում (յերաշտահավերը), մի յերորդը ամառը ճանձեր ու մոծակներ ե վորում (ծիծենակները): Յերբ յերեխաները տեսնեն, վոր փիսիկը լվացվում ե թաթիկներով, չեն ասի, վոր նա հյուրեր ե կանչում, քանի վոր, հետեւրով նրան կտեսնեն, վոր որվա մեջ նա մի քանի անգան այդպես լվացվում ե, վորով և կրծքընեն, վոր կատուն շատ մաքրասեր ե:

Այս բոլորից յերեւում ե, վոր ծնողների պարտականությունն ե՝ հնարավորություն ստեղծել, վոր յերեխան հաճախ լինի բնության մեջ՝ ոգնել նրանց գիտելու, թե ինչ ե կատարվում բնության մեջ և սնութիւնապաշտ կանանց նման շրացատրել իսկ չգիտենալու դեպքում՝ իմանալ զրքերից կամ ուսուցչից, թե ինչպես և ինչ ե կատարվում շուրջը:

Այդպիսով, յերեխան մեծանալով, գիտակից մարդ կդառնա, վորի համար պարզ կլինի, թե ինչպես պետք ե հողը լավ մշակել ինչպես և ինչը պետք ե պահպանել վոր բերքը լավ լինի, ինչը պետք ե վոչչացնել ինչպես և ինչու. և նա ել չի հավատա հրաշքներին, վորովհետեւ կիմանա, վոր ամեն ինչ կարելի լի բացատրել, յեթե ուշադրությամբ ծանոթանա շրջապատին, սովո-

րի և ուսումնասիրի: Յեթե մեր պապերին ասելին, թե մարդիկ թռչելու յեն ոդում, իրար հետ խոսելու և իրար լսելու յեն մեծ հեռավորության վրա (հեռախոս), նույնիսկ քաղաքից քաղաք, վոր կարելի լի այնպիսի նկարներ տեսնել, վորտեղ մարդիկ ու կենդանիները շարժվում են, վոր առանց թատրոն կամ մի հավաքուլթ զնալու, մարդ տանը նստած, կարող ե ճառեր կամ յերաժշաություն լսել—նրանք չելին հավատա և կասելին, վոր անպայման այդտեղ մի կախարդություն կլինի: Այսպես, առաջ շատ գիտնականների, վորոնք գյուտեր են արել, այքել են, ասելով թե՝ նրանք կախարդ են:

Իսկ հիմա վոչ վոր չի հավատա, վոր ոդանավի թռչելու կամ ելեքտրաքարշի շարժվելու մեջ կախարդություն կա. գյուղերը նույնիսկ հիմա աշխատում են բաղիոնադորդ անցկացնել և ինչու, վորովհետեւ մարդիկ տեսնում են, վոր ըոլորը շինված ե մարդու ձեռքով, տեսնում են, վոր ելեքտրականություն կա. գիտեն թե ինչպես են ստանում այդ ուշժը, տեսնում են, վոր մարդիկ մեքենաներ, քաղաքներ են շինում, հիմա գյուղերն ել են լուսավորում ելեքտրականությամբ, բաղիոնադորդ են շինում և ոդնում են գյուղացիներին, վոր իրենց տեղերում նըստած՝ իմանան, թե ինչեր են կատարվում աշխարհում:

իսկ եթե կան բաներ, վոր դեռ չի կարելի  
բացարել կամ հասկանալ պատճառն այն ե,  
վոր դեռ դժվար ե զանազան փորձեր կատարել.  
բայց ժամանակի ընթացքում մարդիկ ավելի շատ  
գլուխեր կանեն և բնության մեջ ավելի շատ  
բաներ կկարողանոն ոգտագործել իրենց կյանքը  
բարելավելու համար. Որինակ՝ Ամերիկայում հի-  
մա փորձում են այն ոռոգքը, վոր առաջ միայն  
պատերազմի ժամանակ եյին զործ ածում, ոգ-  
տագործեն դաշտերը հերկելու համար, իսկ խեղ-  
դող գաղերով ուզում են պալքարել մէների, դաշ-  
տամկների ու մորեխի դեմ:

Այս բոլորին մարդը կհասնի և կոգտագործե  
այն ժամանակ սիախն, չեթե մանկությունից սո-  
վորի դիտել, ճանաչել թե ինչը ինչից ե առա-  
ջանում և իերբ լավ ծանոթանա բնության, թե  
ինչպես են ապրում զանազան կենդանիներ և  
նրանցից ինչ սովուներ կարելի յե ստանալ, թե  
ինչպես ե ազդում քամին, կրակը, ջուլն ու  
լուսը. Այն ժամանակ մարդը չի վախենա բնու-  
թյունից և համարձակորեն կարող ե իր կյանքի  
մեջ մտցնել անեն օք նոր բան—այն ժամանակ  
մարդու համար մեր կյանք նոր ձեռք կառու-  
ցելը հեշտ բան կլինի:



Գիրք 10 հատ.



